ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **31/հոկտեմբերի/2023 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....8..... անդամներ:

Բացակա էին՝

.....Հ. Հերմեզյանը, Հ. Սարգսյանը, Մ. Գեղամյանը,.....
.....Ձ. Բաբայանը, Դ. Մեսրոպյանը, Մ. Ավետիսյանը.....
.....

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադեվոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական՝ 2023 թվականի հոկտեմբերի 31–ի նիստի հետևյալ *օրակարգը՝*

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Հողի վարձավճարի տույժի գծով արտոնություն սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 19-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5 Ջերմուկ քաղաքի վարչական տարածքի մարդաշատ վայրերում վճարային տերմինալներ տեղադրելու նպատակով հողամասեր առանձնացնելու և դրանք օգտագործման տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վ. Սարգսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------8 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզիՋերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 102-Ն որոշման 2-րդ կետը՝

1. Ջերմուկ համայնքի բյուջեի եկամտային մասի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ» գործառնական նշանակության «0069-Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 26,856,400 ՀՀ դրամ գումարով, «38-01-00-Ջերմուկ սուբվենցիաներ» գործառնական նշանակության «0069-Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ» տնտեսագիտական հոդվածից ներքին վերաբաշխումով 5,008,000 ՀՀ դրամ գումարն ուղղել «38-06-00 - այլ աղբյուրներից դրամաշնորհներ» գործառնական նշանակության «0026- կապիտալ արտաքին դրամաշնորհ՝ ստացված միջազգային կազմակերպություններից» տնտեսագիտական հոդվածին:

2. Ջերմուկ համայնքի բյուջեի ծախսային մասի գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշիվներում կատարել հետևյալ փոփոխություններն ու ներքին վերաբաշխումները՝

2.1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և Ջերմուկի համայնքապետարանի միջև ս/թ սեպտեմբերի 22-ին կնքված կապիտալ սուբվենցիայի հատկացման N 09/23 պայմանագրին համապատասխան՝ Ջերմուկ քաղաքի ճոպանուղու գլխավոր ճոպանի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53, 210002-«Ջերմուկի ճոպանուղի սուբվենցիա» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5113- շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգում» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 26,856,400 ՀՀ դրամ:

2.2. Բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53,210002- «Ջերմուկի ճոպանուղի սուբվենցիա» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5121- տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 5,008,000 ՀՀ դրամ գումարով՝ տեղափոխելով բաժին 04,խումբ 02,դաս 01, ծրագիր 55, 210002 - «հակակարկտային կայաններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման «5129-այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական հոդված:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ ս/թ հոկտեմբերի 31-ի դրությամբ՝

Ընդամենը՝ *Եկամուտների գծով- 936,100,247.0 ՀՀ դրամ*

Ծախսերի գծով- 936,100,247.0 ՀՀ դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ն/

Լսեցին

ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏՈՒՅԺԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

1. Հողի վարձավճարի գծով արտոնություն սահմանել՝ առաջացած տույժի վճարման պարտավորությունից ազատելով Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0208-0034 կադաստրային ծածկագրով հողամասի վարձակալ Դուստրիկ Աղվանի Ալավերդյանին՝ հաշվի առնելով վերջինիս թոշակառու լինելու հանգամանքը և այն, որ հողամասը վարձակալության իրավունքով օգտագործելու ժամանակաընթացքում ցածրակարգ հողատեսքը վերածել է բարձրակարգի (վարելահողից՝ կորիզավոր այգու):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ----7---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----1---------- (Հ. Հովսեփյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների՝ համայնքային սեփականություն համարվող արխիվացման ենթակա՝ 2018 թվականի արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես պետական սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 19-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին» N 19-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետի «ա» ենթակետում

1) «ամսական» բառը փոխարինել «տարեկան» բառով,

2) «10 000 (տաս հազար)» թիվը փոխարինել «15 000 (տասնհինգ հազար)» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարկանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- Դեմ----1---- Ձեռնպահ----0----

(Ա. Ավետիսյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՐԴԱՇԱՏ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետին համապատասխան՝

1.Սահմանել՝

ա/ Ջերմուկ քաղաքի վարչական տարածքի մարդաշատ վայրերում վճարային տերմինալներ տեղադրելու նպատակով առանձնացվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի մակերեսներն՝ ըստ սույն որոշմանը կից հավելվածում նշված չափերի:

բ/ Հողամասի սահմանները որոշվում են Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի կողմից տրված հատակագիծ-սխեմաներով, որոնք ենթակա չեն պետական գրանցման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը տրամադրել օգտագործման առանց մրցույթի՝ կառուցապատման իրավունքով, վճարային տերմինալներ տեղադրելու նպատակով, 1 քմ–ի համար ամսական վճար սահմանել՝ 5000 դրամ:

3. Լիազորել համայնքի ղեկավարին Ջերմուկ քաղաքի տարածքում վճարային տերմինալները սպասարկող տնտեսվարող սուբյեկտների հետ կնքելու հողօգտագործման պայմանագրեր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին և 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի 2-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

ա/ պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,51816 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0016) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 30 000 (երեսուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի,

բ/ պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,51631 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0015) մրցույթային եղանակով

վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 30 000 (երեսուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի

գ/ գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,36024 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0230-.....) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 30 000 (երեսուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ---------- 7 *Դեմ*---------- 0 *Ձեռնպահ*---------- 1
(Վ. Հովսեփյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ՝

ա/ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 10-016-0208-0109 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 09102023-10-0011) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող, մակերեսը՝ 0,70093 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 273500 (երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր) դրամ

գ/ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 10-016-0208-0110 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 09102023-10-0014) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող, մակերեսը՝ 0,24007 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 94 000 (իննսունչորս հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 21-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բացակա
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	բացակա
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	բացակա
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	բացակա
Գևորգյան Մանան Աղվանի	բացակա

Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

. Վարդան Սարգսյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը՝ _____